

## Բբ

# ՆՈՐԻՆ ԹԵՇԻՌՏՈՄԻ ԵՊԻՄԿՈՊՈՄԻ ԽԱԲՍՔ ԵՐԿՐՈՐԴ՝ Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՄՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ Ի ՔՆՆՈՒԹԻՒՆ ԴԻՄՈՂԱՅ, ՅՈՐՈՒՄ ԹԷ ՄԻ ԱՍՏՈՒԱԾ ՏԷՐ ՅԻՍՈՒՄ.

Պայծառ է մերձակայ տանիս պատճառ և հասարակ փրկութիւն մարդկան բերեալ։ Պայծառ է և մերձակայս ժողով գրիութեամբ ընկալեալ զշնորհն և տուեալ լինի առատապէս շնորհն, որոց գրիութեամբ ընդունին զնա, քանզի այսքան շնորհեալ լինի չափ պարգևին որքան է մեծութիւն գրիութեան ընդունողացն զշնորհն, որպէսզի յորժամ առեալ զպարգևն գրիացիս զտուողէն ոչ միայն փոխարէն ետուի, որոյ առերն, այլ և առաւելագուեցից պարտապան արարեն քեզ զտուաղն։ Արդ, գրիութեամբ ընկալարուք զշնորհն պայծառացուեալ մեզ տանս զայս։ Եւ պատճառս տանիս է երեւում Աստուծոյ առ մարդիկ։ զալուստ, որ միշտ մերձն է մերձակրութիւն\*, որ զամենալն լնու, ի վեր հայեցողութիւն, որ զամենալն տեսամնէ, քանզի «իիրսն եկն, ասէ, եւ իրքն զնա ոչ ընկալան»<sup>9\*</sup>։ Յաւէտ\* «զի յաշխարին է, ասէ, եւ աշխարի զնա ոչ ծանեա»<sup>10\*</sup>։ Այլ ոչ է ամբաստանութիւն մարդկան անզիտանալն ասիլ։ Քանզի աստուածաբանութեան բնութեան անհասանելի է խորհրդոց մարդկան Աստուած, զի ոչ բնաւորեցան միտք մարդկան տեսամնել զԱստուած ի բաց փախչի ի մարդկայնցն մտածութեանց, աստուածային բնութիւն զերամբարձեալ է քան զմերս խորհուրդս։ Արդ, զրկեալ էար ի վերագունին բնութեան յաստուածանալութենէն, որ զի մի՛ եղիցի։ առնու բնութիւն երեւելի աներեւոյթն, ընդունի մարմին շաւշափելի շաւշափմամբ ոչ ընրունեալն։ Աներեւոյթն Աստուած երեւելի լինի, Բանն շաւշափելի, Միածինն Որդին Աստուծոյ ազգակից ծառայից լինի, զի մի՛ զամիսլացի գիտութեան մարդկան զերազանցեալն քան զմարդոյ բնութիւն։ Եւ մի կարծեսցի աստար յԱստուծոյ եղեալ զՈրդի, քանզի և յառաջնումն զալուստն Աստուծոյ տպաւորեալ լինի արդինակալը և միշտ ծանուցաւ մարդկան երեւեալ հիւթովք, որով մարդ էր տեսամնել առ ի մէնց։ Ապա եթէ ոչ յառաջ եկեսցէ հրեայ և ի միշի կացցէ, որ անհաւատն լինի երեսման Աստուծոյ յայտնեցելոյ մարդկան մարդոյ բնութեամբ, ասացէ ինձ՝ զիա՞՞րդ ետես Մովսէս զԱստուած։ զբնութիւն ետես զաներեւոյթն, և ոչ երբէք, քանզի անհասանելի է նա խորհրդոց մարդկան։ Եւ զիա՞՞րդ ետես, ասա ինձ ի մորենոյն վառեալ հոր և զմորենին ոչ ապականողին։ Արդ, վասն է՞՞ ոչ հաւատաս ի կուսէ ծնիցելոյն և զկուսութիւն ոչ ապականողին։ Եւ դու լսելով եթէ ի մորենոյն բարբառի Աստուած և ասէ ցՄովսէս։ Ես եմ Աստուած Աբրահամու և

\* ՄՄ 2594, թ. 201ա-203ա:

\* Զիր ՆԲՀ:

<sup>9\*</sup> Ցովի. Ա 10:

\* Թերեն՝ յանի:

<sup>10\*</sup> Ցովի. Ա 11:

Աստուած Սահմակայ և Աստուած Յակոբավ՝<sup>11\*</sup>, և թէ անկեալ Մովսէս երկիր պազաներ. Աստուած ոչ համարեալ Բուր զերեանան, այլ Աստուած զբարբառեալն: Եւ յորժամ զարգան կուսական լիշեմք, զարշելի համարիմ և ի բաց դարձուցանես: Զի՞նչ անարգագոյն է, աղէ, ասա ինձ. մորենիմ՝ թէ՝ արզան կուսիմ՝ մաքուր ի մեղաց ախտից: Ոչ զիտես, թէ առաջինքն արդինակը են այժմու եղեղոց, քանզի խորհուրդ ճախատովի ի ձեռն հնոյն. Վասն այսորիկ մորենին վասի Բուր կուսիլ զիտոր ոչ ներգործէ, լուսառորէ և ոչ ապականէ, ճառագայթէ և ոչ արէ. բարեգործէ և ոչ դատի: Արդ, և ի մորենուն ոչ տեսանես զկոյն, և ի հուրն ոչ տեսանես զմարդասիրութիւն եկեղյն, դատաւորն, որ առ որս դատին և դատումն ոչ ի լինի, դատին ի դատապարտեալս և ոչ ուրեք պատիժ: Դատաւորն ի վերայ կացեալ ոչ ի դատել, այլ յատցանել, ոչ դատել, այլ թշշկել. Տեսանես, թէ զիարդ այն մեզ հուրն զաստանար մարդասիրութիւն նշանակեաց: Արդ, մի՛ զարմանալը, թէ Աստուած գոլով Բանն, յարզանդէ կուսականէ ծնանի, քանզի ոչ համարի թշնամանս Աստուած, որ ինչ առիթ փրկութեան մարդկան է և դու մի այսպէս անարդ կարծէր զբնութիւն Աստուծոյ, որպէսզի և թշնամանաց ի Բա հասանել ուրեք ոչ թշնաման զբնութիւն զան, այլ իւրացուցան զնուատուն, զի ապրեցուցէ զմերս բնութիւն: Արդ, յորժամ անարզն զերանեալի բնութիւն Աստուծոյ ոչ թշնամանեն, այլ փրկութիւն մարդկան գործեն, զիա՞րդ ասես զայտնաս մերոյ փրկութեան թշնամանաց առիթ լինել Աստուծոյ: Արդ, երեւեցաւ Աստուած այսար ի կուտ և կոյսն մնաց կոյս և Մայր եղել, քանզի որ անապականութեան է տուիչ ապականութիւն ոչ գործէ: Արարին աննահութեան ոչ ինչ ապականեաց:

Իսկ Վասն զի և Փոտինոս սոսկ մարդ ասէ զնեալս ոչ ասեղով Աստուծոյ գոյ զծնունդն և զարգանդէ յառաջ եկեալն մարդ ասէ որիշ Աստուծոյն, ասասցէ ինձ այժմ զիա՞րդ բնութիւն մարդկային յարզանդէ կուսականէ ծնեալ զկուսակչիւն արզանդին պամեաց անապական, քանզի ոչ ուրուք ի մարդկանէ մայր կոյս մնաց: Տեսանես, եթէ զիա՞րդ կրկին մոտածութիւն Վասն ծնիցեղոյն տա ինձ եղեալն: Քանզի եթէ ըստ մեզ ծնառ մարդ էր, իսկ եթէ զմայն կոյս պամեաց՝ Աստուած ճանաչի ծնեալն, որոց բարուքն խորհին, քանզի Աստուած եկն յաշխարի ոչ տեղուցէ ի տեղի փոխեալ, այլ զբնութիւնս զգեցեալ զիմ, և, որպէս ասացի, երեւել կամեցեալ, որ բնութեամբն է աներեւոյշ, որպէսզի ոչ ունէր սկիզբն գոյուն Աստուած ի ծննդեան, այլ երեւեղոյն մարդ, Վասն զի Աստուած գոլով մարդ լինել կամեցաւ Վասն մարդասիրութեան, որ առ մեզ, զի մեք զդատաւորն որպէս զազգակից ընկալցուք, զի ունիցիմք Վատահութիւն, որք ի մերոցս ուղղութեանց ոչ ունիմք համարձակութիւն: Արդ, զի՞նչ: Աստուած գոլով զայ առ մարդիկ՝ ոչ տեղի ի տեղուցէ փոխեալ. այլ զաներեւոյշն բնութիւն ցուցեալ երեւելի, և երեւեալ որպէս մարդ, որպէս ազգակից մարդկան<sup>12\*</sup>, որպէս և Աւետարանիչ քարոզէ ասեղով, եթէ՝ «Բանն մարմին եղեւ»<sup>13\*</sup>: Եւ զիա՞րդ ասէ եղեւ Բանն մարմին. զիա՞րդ Բանը լինել մարդ. Բարցանես զեղանակ Աստուծոյ սքանչելեացն. եթէ Բասանելի էր մեզ անըմբոնելին բանի ոչ էր սքանչելի, այլ ըստ բնութեան իւթ: Իսկ եթէ սքանչելի և նշան եղեալ՛ թոյլ տոր զբան սքանչելացործին Տեառն, զի եղեւ կամին, զի զիտացես և ի լինելութեանն զշահն հաւատով ընկալ-

11\* Ելք Գ.6:

12\* Բարոր Գ.38:

13\* Թովի. Ա.14:

շիս: Խակ եթէ զիարդ եղել՝ ներգործողին թող: Եթէ դու հաւատաս բժշկի եւ ոչ խնդրես զեղանակ բժշկութեան, հաւատով արուեստին զիրկութիւն, այլ եւ ոչ այլ ոք յանարուեստիցն ըննէ: զարուեստարին յեղանակն, այլ ճանաչէ զեղեալն, բայց թէ զիա՞րդ՝ արուեստարին տա թոյլ: Խակ դու ամենայն սքանչելեացն զահման խնդրես որպէս պէտս ունեղով Բանին, զի զնոյն սքանչելագործիցս Աստուծոյ եւ դու: Այլ զոր ինչ ամենելին այժմ ասեմ զիր ի զորոց սահման ճանաչեմք այսուիկ բնութիւն ոչ է սքանչելի եւ ոչ ճշան: Որպէս զի՞նչ ասացից: Գաղատոս շինեաց տուն. զբանն ճանաչեմք զնիւթիւն եւ զշարադրութիւնսն եւ ասել զեղանակն կարեմք, թէ եւ վասն անարուեստութեան գործեղոչ եմք բաւական: Ստեղծ ի ծնէ: կուրին աչս Միածինն ի կատոյ. այս ի վեր քան զմեր բան է սքանչելիք կոչին խորհրդովք մարդկան ոչ քննեալ: Նշան կոչչի ի վեր քան զսովորութիւն բնութեան եղեալ: Եթ զի եղել՝ զիտեմք, բայց ասել զեղանակն ոչ ունիմք, քանզի ի կատոյ խեցի եւ աղիւաք կազմին եւ ոչ աչաց բարեսորմութիւն ստեղծանի, ոչ լինին պարուտակը նասրումք եւ ոչ թիր զարդարին, եւ ոչ բոլորակութեան ճշգրտութիւն պարան զեղեցկագունութեամբ ճախարակեալ. կաւ ոչ բնաւորեցաւ յաչաց պարկեշտութիւն մտանել: Ապա ուրեմն, զոր ինչ բնութիւն կատոյ ոչ ընդունի, այն սքանչելագործութեամբ լինի եւ որ ոչ բնաւորեցաւ ընդունել զական տեսութիւն, զայն ընկալաւ սքանչելագործութիւն առ իրն քարշել զբնութիւն եւ ոչ հնազանդեալ սահմանի բնութեան: Արդ, մի՛ եւս անկանի ի տկարութիւնս մարդկալնոյն բնութեան, մի՛ ասեր, թէ զիա՞րդ տարա մարդոյ բնութիւն զԱստուած, զիա՞րդ Աստուած մարդ եղել, զիա՞րդ Աստուածն Բան մարմին տեսանելի եղել: Այլ զի եղել, հաւատավ, բայց զեղանակն եւ զահման տուր Արարողին: Խակ եթէ կամիս եւ յարինակէ հաստատել քեզ առաջիկալս, եթէ զիա՞րդ անմարմինն մարմնանա, աներեւոյշն երեւի, անշաւչափելին շաւչափի ոչ լիւրոյն բնութենելն փոխադրեալ, այլ առեալ ձեւ երեւի եւ շաւչափելի բանս այս, որ յառաջազայ ի մարմնոյն, որով վարեալ խաւահմք բան երեւելի եւ ոչ ձեռին շաւչափելի, այլ միայն ի լսելիս հնչեալ, բայց վասն զի յառաջս եկեալ ի մէնջ բան յարինակ զոյեղէն Բանին Աստուծոյ քերեմ, մի՛ կարծեր յառաջ քերեալ բան ասել զԱստուածն բան: Ի բաց տար: Այլ զի Բան ասի Միածինն, զոր ասէ Աստուածայինն զիր զանախսութիւն նորայն ծննդեան, վասն զի եւ միտք մարդոյ անախսորար ծնանին զբանն: Վասն ալսորիկ է ուրիէք, զի Որդի կոչչ զնա Հար, եւ է ուրիէք, զի Բան անուանէ, եւ ալլուր ճառագայթ կոչչ աստուածայինն զիր զիւրաքանչիւր ինչ յալսոցիկ անուանց ասէ վասն նորա, զի իմասցիս զյարդագս Քրիստոսի ասացեալսն առանց հայրութեանց, քանզի ալլուր ալլովք անուանակոչութեամբ հայի ի Բա պատշաճիք փառացն Աստուծոյ զվարդապետութիւն առնել կամեցեալ: Որպէս զի՞նչ ասացից: Որդի կոչչ Հար զՈրդի՛ զհամագոյութիւն յայտնել կամեցեալ, քանզի եւ քո որդի ի նորին բնութենելդ ծնանի: Կամեցեալ բանի ցուցանել միութիւն Հար եւ Որդոյ, ասէ Որդի Հար զառ ի նմանէ ծննապն Միածին: Խակ վասն զի ծնունդ եւ որդի, որ ի մէնջ պատճառ ունի զծննդեանն ախտի, զայս Որդի կոչչ եւ Բան: Զանախսութիւն ծննդեանն այսու բանի յայտնեալ. այլ վասն զի Հարը ոչ եղեալ մարդ, խոստովանելի է, եթէ երիցագոյն ցուցանի քան զիրն Որդի: Այսու անուամբ զնախամտածութիւն\* տուեալ Հար բան զՈրդի: Եթ զի մի՛ զնոյն եւ յաղաց աստ-

ուածալին բնութեան զմտաւ ածցես, այլ գոյակից Հար զ ԱՄիածինն իմասցիս եւ մշտնչենաւ տրակից ճառագայթ կոչէ Հար զ ԱՄիածինն, քանզի ճառագայթ ծնամի ի լուսոյ, բայց ոչ երբեք իմանի յանոյ եղեալ քան գլուխ, այլ յորմէ նետէ լոյսն, յայնմ նետէ ի լուսոյն իմանամք ծնեալ զճահագայթն: Արդ, գոյակիցն գոլ միշտ Հար զ Որդի նշանակեսցէ քեզ ճառագայթն եւ զանախութիւն ծննդեանն յայտնեսցէ Բանն եւ զիամագոյն Որդի ծանուացէ:

Այլ վերատին դադցուք, յորս առաջին կայս եւ զայսաւը ծնիցելոյն Բանին յայտնեսցուք զերեւումն եւ ի ձեռն պարինակի ցուցցուք, եթէ զիա՞՞րդ բնութեամբ ոչ երեւելին երեւելի լինի եւ անշաշափելին վասն անմարմին բնութեան ունեղոյ գտանի շաւշափելի: Բանս այս, զոր այժմ յառաջ բերեալ առ միմւան յասահիք, որովք վարիմքս բան է անմարմին ոչ ընդ տեսութեամբ անկեալ ոչ շաւշափելեալ շաւշափեալ: բայց վասն զի բան զգենու զգիրս եւ գտառս եւ երեւելի լինի, ընդ տեսութեամբ անկամի եւ շաւշափելի, բեր ինձ զոմն բարբառեալ առ ոմն, մի թէ յառաջ բերեալ բանն տեսեալ լինի մի եթէ ձեռամբ շաւշափեմք զբանն, որ յառաջն մեղու, իսկ եթէ գրեսցես ի քարտիսի, զոր ոչն տեսէր յառաջագոյն, յետոյ տեսանես, եւ զոր ոչն շաւշափեցեր յառաջագոյն գտեսակ բանի զայս ի ձեռն քարտիսին եւ զոյլոյն շաւշափես: Է՞՞ո. աղագաւ. վասն զի անմարմին բանն զմարմին քարտիսին եւ զձեւ տաղիցն զգենու: Արդ, վասն զի եւ յայտնի եղեւ յարինակէս եւ լիշեցեր յարինակովս գեղեալսն, ըստ սովորութեան բեր ցուցցուք, թէ զիա՞՞րդ Միածինն Աստուծոյ, Աստուածն Բան, որ նախ քան զյափիտեան ընդ Հար անմարմին գորով բնութեամբ իրացուցեալ յանոյ ծնեալ ի Կուսէ ոչ ի սկիզբն առեալ գոլոյն Աստուած, այլ ի սկիզբն առեալ գոլոյն մարդ, եւ մի՞ ասեր ինչ, թէ վասն զի առ ի Հարէ ծնաւ Միածինն՝ զիա՞՞րդ ծնաւ դարձեալ ի Կուսէ: ի Հարէ ծնաւ բնութեամբ, իսկ ի Կուսէ ծնաւ վասն տնաւրէնութեան. զայնպէս Աստուած եւ զայսպէս մարդ, վասն զի քո բանդ ծնունդ է քոյոցդ մտաց, այլ վասն զի բանդ զայդ, զոր ծնամին միտքդ քո դմել կամիս տարիս եւ գրով եւ տպաւորել կամիս ի քարտիսի, ձեռամբ գրես զգիրն եւ եղանակով իմն դարձեալ ձեռամբ ծնամին զբանն ոչ յայնժամ առեալ սկիզբն գոլոյն, յորժամ ձնուամբն գրեցաւ եւ ոչ յայնժամ եկեալ ի գոյութիւն, յորժամ ձեռնդ տպաւորէր զգիրն առ ի մտաց ծնեալ եւ երեւելոյն սկիզբն ի ձեռամէն առեալ բանին տպաւորութեամբ գրոյն: Արդ, վասն զի արինակդ հաւասարի եւ պատկերդ ծանալը եղեւ, բեր նախատպիհն պատշաճեսցուք զպատկերն: Աստանար Միտք անդ Հայո իմա, աստ զբանն ի մտաց գիտես ծնեալ, իսկ անդ զբանն էապէս եւ գոյեղէն իմացիր ծնեալ ի Հարէ: Աստանար ձեռն տեսանես գրով ծնեալ զբանն, անդ Կոյս իմա ի ձեռն մարմնոյ ծնեալ զբանն՝ ոչ սկիզբն Աստուածութեան առեալ ի ձեռն ծննդեանն. մի՞ լիցի, այլ երեւեցոյն Աստուած մարդկան եղեալ մարդ, վասն զի եղեւ որպէս զիս բնութեամբս իմով եւ զիմս ծնունդ կոչեցաւ: Վասն այսորիկ եւ ծնունդ իրացոյց Բանն Աստուած եւ մայր ընկալաւ զկոյսն եւ ընդ յարգանդէ անց զարդարեալ կուսութեամբ, քանզի ոչ յումեքէ գործ. ամենայն ինչ բարի եւ յոյժ բարի, եթէ տեսցուք զնա եղեալ որպէս ետես որ ստեղծն, քանզի «ետես Աստուած զամենայն ինչ, զոր արար, եւ ահա բարի են յոյժ»<sup>14\*</sup>: Անախտ աշաւը ետես զնոսա եւ որպէս զԱստուած զնոսա տեսանես յոյժ բարի, ի բաց արտաքսեա զախտ, եւ ճանաչես զբարետիմութիւն եղելոյն: Արդ, զի՞նչ է սքանչելի, թէ իր գործ եւ իրում տան բնակեաց Աստուած,

դու ասես յերկինս արժանապէս բնակեալ ի նմա եւ անարժան նմա միայն զմարդն վարկացիս՝ դատելով իրս ոչ ճշմարտութեամբ բանից, այլ ախտի եւ չարհասանութեամբ<sup>\*</sup>: Զի՞նչ է բարձրագոյն. աղէ, ասա ինձ երկի՞ն եթէ՞ մարդ, զի՞նչ պատուականագոյն է Աստուծոյ, արեգակն եթէ՞ մարդ: Մի՞ հայիր ի տարերմ պայծառութիւն եւ մի՞ վասն գեղեցկագոյնութեան պատուէր գընութիւն: Մի՞ ընդ պայծառ ճառագայթն արեգակն զարմանար եւ մի՞ «վասն զի ևս մորթ եւ մին եմ զգեցեալ»<sup>15\*</sup>, ըստ աստուածայնոյն թորայ անարգէր, այլ զբանաւորական հոգույով զբարեստորմութիւն տես: Հայեաց ընդ մարդոյու կազմութիւն եւ զարմացիր ընդ կենդանին. միտս ունի կարող տիրել եւ իշխել ամենայն կենդանեաց, ձեռ էառ ամերնդակ մտացն իմաստութեան գործարան ամենայն արուեստի արարչագործ: Միայն յամենայնի հարկէ ստացուածոց ազատ եղեւ, տէր իւրոցն կամացն միայն զմարդն էստեղ Աստուած. ո՞չ տեսանես զարեգակն ի հարկէ ընթացեալ զընթացան, յոր կարգեցան, ո՞չ տեսանես միատեսակ զբարումն առորա: Ընդէ՞ր, վասն զի իւրոցն կամացն ոչ եղեւ տէր, բայց դու շրջին ազատացեալ, գործես զինչ եւ կամիս, ոչ ունիս հարկէ, որ մնէ զքեզ բռնութեամբ, ազատ հոգուվ կարգեցար: Արեգակն ծառայ ի հարկէ, իսկ մարդ ի կամաց ազատ: Արդ ո՞վ է վեճագոյն, աղէ, ասա ինձ. ծառայ<sup>16</sup> եթէ՞ ազատ, որ ընդ լծով հարկի է եթէ՞ որ յամենայն հարկէ ազատ, ոչ ինչ է ուրեմն սքանչելի եւ ոչ հրաշակիառ, եթէ ի մարդու բնակեաց Աստուած եւ ընկալաւ, զոր ըստ իւրումն պատկերի ստեղծ, քանզի զպատի մարդոյն Աստուած անդէն ի սկզբանն արարչութեան եցոյց հոր առեալ յերկրէս ստեղծեալ զնա եւ պատկեր կազմեալ իւրոյ Աստուածութեան: Արդ, վասն է՞ր զոր համերժեալն կազմութեամբն պատուել, սոյնպէս յանարդ բնութենէ ստեղծ, ընդէ՞ր ոչ ի պայծառութենէ արեգական առեալ արար զմարդն, այլ ի յերկրէ եւ ի հողոյ ստեղծանէ. ի նիւթոյ, որ ի ներքոյ ամենալ եւ կոյսի: Կամիս ուսամել, թէ է՞ր աղազա, վասն զի պատկերան կամեր պատուել զմարդն, անարդ եւ նմա բնութիւն, զի մի՞ զերազանցութիւն պատույն բարձրացուցէ զմարդն յապարասանութիւն, զի յորժամ ի վեր քան զբնութիւն պատուեսցի անփոխեսցի յիշմամբ բնութեան եւ ծանից զմեծութիւն պատույն ոչ զիւրոյն արժանաւորութեան, այլ՝ ըստ շնորհի տուողին: Ապա ուրեմն եւ այս մարդասիրութեան կազմողին էր՝ պատկերին Աստուծոյ յերկրէ ունել զբնութիւն եւ զշափարոն խորիելոյ, որպէսզի բարեստում ի կենդանիս գոլ զմարդն, թէ եւ յետոյ թշնամանեցաւ ի նոտանել ախտիցն, մի՞ տեսաներ զնա զայթակղեալ, այլ նախ քան զանցանել ընդ արէնսն զպատկերսն Աստուծոյ զբարեստորմութիւն ած զմտաւ, զոր դարձեալ բազում բարերարութեամբ ետ նմա Աստուած՝ միաւորեալն ընդ նմա զիւրոյն պատկեր: Արդ, ոչ ինչ անպատշաճ առոյն մարդասիրութեան եղեւ, քանզի ոչ են թշնամանք բարի Տեառն հաղորդել ծառայի ի ծառայականացն յալզուտ, քանզի ոչ թշնամանի այսորիդ բարին, այլ որ ի հաչէն՝ պատկերան նանաչի: Եւ մի՞ զարմանար ընդ իրին զերարուն մտածութիւնս<sup>\*</sup>: Քանզի եւ այժմ թէ զքեզ ինքն տուն կազմեացես Աստուծոյ, եւ ի քեզ բնակի, եթէ եւ ոչ այսպէս որպէս յՈրդոց, քանզի եւ «ի Քրիստո բնակէ ամենայն լուսմն աստուածութեան մարմնապէս»<sup>16\*</sup>: Այլ, ո՞վ սքանչեացս: Ամե-

\* Զիր ՆԲՃ:

15\* Ցովք. Ժ 11:

\* Հուեարենսում բացակայում լ՝ «զերարուն մփածութիւն»:

16\* Կողոս Բ 9:

նայն լրումն Աստուածութեան ի միում բնակի և զամենապն լու և պարումակէ զարարածս բոլորն գորով ի միում և ստացուածոց ոչ ումեք տանեի: Եւ մի՛ երեւեսցի քեզ ասացեալս անմարթ, քանզի եւ ես այժմ յառաջ քերեմ բան: Եւ է բան այս ի միում բոլորն յամենեսին եղեւ և բոլոր բանն տարեալ եղեւ ի միում, և ի բազմութեն՛ց բան ոչ պարագի: Արդ, եթէ իր եղեալ և ապականեալ և ի միում բնակէ բոլորն և յամենեսին լինի՛ զի՞նչ երեսի քեզ սրանելի, եթէ Աստուած բոլոր ի մարդում բնակեաց<sup>1\*</sup> և յամենեսին գտանի:

Արդ, պատճառք բոյոյ տանի Աստուծոյ լինել մարդ՝ առեալ զմարդկայինս, զի տացէ զաստուածայինս և իրացուցեալ զշարչարանս<sup>2\*</sup>, զի պարզեւեսցէ զանշարչարութիւն<sup>3\*</sup> ի ներքոյ անկեալ մահու, զի անմահութիւն պարզեւեսցէ, քանզի իր արար զմարդկան կիրս՝ ոչ զբնութիւն փոխեալ, այլ կամաք իրացուցեալ զայն և յոյժ վայելչաբար առնէ զայտսիկ զմարդն ապրեցուցանել կամեցեալ: Արդ վասն է՞ր առնէ: Իր զմարդկայինս կիրս, վասն զի կամէր չարչարանաք զշարչարանս ի բաց բառնալ և մահուամբ խափանել զմահ և համատեսակարքն ընտի համատեսակացն կամեցաւ մարտնչել: Իրացուցանէ զիսաշն, իր առնէ զապտակսն, իր առնէ զիկապանսն, զի Աստուծոյ եղեալ չարչարանքն ի վերայ չարչարանացն առցէ իշխանութիւն: Քանզի ոչ բնութիւն Աստուծոյ վնասէր, զի ոչ փոխարդութեամբ իրով ընկալս զշարչարանն և զզարութիւն առ ի յԱստուծոյ առնու չարչարանքն իրով համատեսակացն: Քանզի այնութեան մահ նորա Աստուծոյ եղեալ խափանեսցէ զմահ և մեռեալ լուծցէ զբոնութիւն մահու, վասն զի եւ՝ Աստուած [եւ՛] մարդ էր: Քանզի ոչ սուկ մարդ խաչեցին հրեացք և ոչ զերեւելի բնութիւն միայն բեւեռեցին, այլ յոր ի նմայն Աստուած քերին զյանդգնութիւնս զերեւելոյն բնութեան իրացուցեալ զշարչարանս: Եւ զի այս քեզ եղից հասասի ի յառաջազդյն ասացեալ արինակ հանցուք զբանսն, քանզի կացցէ թագաւորութիւն բարբառեալ բան և զայս տպաւորել ի ձեռն գրոյ և քարտիսի, ինչ որ կոչի հրովարտակ՝ առաքեալ ի քաղաքս բան զարդարեալ քարտիսի և զրով և ազատութիւն շնորհեալ և կամ այլ ինչ պարզեւս ինչ թագաւորականս, որոց պէտս ունիցին, այլ զայս ասացեալս հրովարտակ [ի]տաղացուցն ձայնի ընկալցի ոք անհաւատ և անհաւան և քաղաքին թշնամի և ներդիմակաց թագաւորին, և առեալ զբարտէսն պատափիցէ: Զի՞նչ պատառեցաւ աստանաւ. քարտէ՞սն միայն, թէ և բան թագաւորական, որ և թէ զբարտէսն միայն պատառեալ դիվագնի<sup>4\*</sup> էր պատառեալն և անպարտ, որ պատառեաց, նա և կամ հինգ դամեկի միայն պարտար, այլ զետին պատիժն տալ և տանչի և ի մահ ածեալ լինի ոչ որպէս զբարտէսն միայն ապականեալ, այլ որպէս և զբան թագաւորական պատառեալ, որ և բան թագաւորին անշարչարելի է և ոչ ձեռին ըմբռնելի իրովն բնութեամբ և ոչ պատառել կարողութիւն, այլ և նա պատառեցաւ զբարտիսին և զգոյն զկիրս իրացուցեալ: Տեսանե՞ս, եթէ զիարդ անշարչարելին ըմդունի զշարչարանս, վասն զի հաղորդ եղեւ բնութեան չարչարելոյ, քանզի ոչ բանն իրով բնութեամբն չարչարեցաւ, այլ զկիրս քարտիսին և տարիցն ընկալսաւ: Մ՛ վստամասցի հրեացն որպէս զսոսկ մարդ խաչել, քանզի երեւելին քարտէսն էր, իսկ ի նմայն թաքրուցեալն բան

1\* «ի մարդում բնակնայ»-ի դիմաց եռն. ուիկ, ևն նքան ձեռուս = նրկնքում բնակվեց:

2\* եռն. ու ու՞ն (կորեկ, սպորին բնազդներ):

3\* եռն. ուն ձանթեան (անկրրություն):

4\* Չի՞ ՆԲՌ:

\*թագաւորական ծննապն ի բնութենէն և լեզուով յառաջ եկեալ, քանզի բան ասի Միածին ոչ իբրեւ զմերս բան յառաջ բերեալ, այլ էապէս և գոյեղէ՞ն ոչ իրովն բնութեամբ չարչարան: Եւ որպէս թագաւորական բանն և օգորյն թշնամանս ինքն ընկալաւ և կիրք քարտիսին բանին իր լինի, այսպէս Միածինն Աստոծոյ. Աստուածն Բան բենեուցելոյն չարչարանս իր արարեալ, վասն այսորիկ որպէս հրովարտակ թագաւորին ապականեալ որպէս զբան թագաւորին///:

\* Ի լրումն ուսումնասիրությանս հարկ է նկատել, որ Թեոդոտոս Անկյուրացու երկերը, առաջին անգամ լինելով, վկայակոչվել են Տիմոթեոս Կուզի Հակաճառության մեջ: Բնականաբար, վկայակոչված հաստվածները բնազրագիտորեն էապէս տարբերվում են առկա ամբողջական թարգմանություններից: Այսպես, «Երանելույն Թեոդոտայ եպիսկոպոսի Անկիրայ» անվան տակ Կուզի երկուս բերված են հետևյալ վկայությունները.

Ա. Քանզի անկարեցի համաճաման ե՛ւ պահել զմիատրութիւնն, ե՛ւ զիրաքանչիր ըստ յատկութեան դիտել (այսքան, էջ 69, տ. 22-24)\*:

Բ. Իբր զմի և զնոյն աստուածաբար փառաւորեալ և կրելով զմարդկայինան, և զայս մեզ խոստովանակից եղիցին ամենեքեան, որք միատրութիւն խոստովանեն ե՛ւ աստուածութեան ե՛ւ մարդկութեան... զի՞ եւս վերլուծանես զտնարկենութիւն փրկական, երկուս իմանալով և զմիատրութիւնն անգուսներով (էջ 96, տ. 8-22):

Ա. Վկայությունը մասն է Բ-ի: Բ-ն քաղված է Ա. ճառից. տարընթերցում 136-142:

Գ. Եթէ միատրեցուցանես բանի, մի՛ հատցես իմացույենամբ, իսկ եթէ հատանես իմացութեամբն, զմիատրութիւնն ուրացար... մի՛ քններ մտածութեամբ զեղեալն, մի՛ քակեցես զրանչն, զտանել զբանն հակառակելով, քանզի ոչ մնայ հրաշափառ Բանն, եթէ ճանաչի (էջ 96, տ. 24-31):

Քաղված է Ա. ճառից. տարընթերցում 387:

Դ. Թեոդոտայ եպիսկոպոսի Անկիրա

Ու՛ր բաժանիչն զՔրիստոս, որ զխորհուրդն մեր հոմանանութիւն գործադն եւ Քրիստոս մի ասեղով, իսկ երկուս ենթադրելով. զոմն ծառապ, իսկ զոմն տէր, զոմն ախտակիր, իսկ զոմն ոչ ախտակիր. զի՞նչ շար մի առաստեանն երկուց կացելոց իրաց (այսքան, էջ 104-105, տ. 35-4):

Ե. Նորին

Իբր աղքատացաւ վասն մեր, ասասցեն մեզ, որք լԱստուծոյն Բանէն բաժանեն զմարդն եւ զմիացեալն որոշեն, յիշելութեամբ (=լինելութեամբ) բնութեանցն, որք երկու ոմանս ասեն զՔրիստոս, և զմին իմացմամբ միացնի (?) առապարանութիւն բերեն (այսքան, էջ 105, տ. 5-10):

\* Այս և հետագա Լքահամարներն ու փողահամարներն ըստ «Տիմոթեոսի նախակոպոսավետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմաննապս ի ժողովոյն Զատկեղովնի, ի լոյս ընծայնալ աշխագործնամբ Կարապնի Ծ. վարդապետի և Երուանդ վարդապետի», Ս. Էջմիածին, 1908:

Դ. Ե Վկալությունները բացակայում են ճառնի այսօր հայտնի թարգմանության մեջ:

Զ. Թեոդոտայ եպիսկոպոսի Անկիրայ; որ ի ծննդութիւն Քրիստոսի Երո՞ւմ ամբաւատիս ի Կոսէ ծնիցեղյն եւ զկուսովեհին ոչ ապականողի, եթէ դու լսելով (?) զի ի մորենայն բարբառէ Աստուած. Արդ, յորժամ նուասուագոյնքն զերանելոյ Աստուծոյ բնութիւնն ոչ թշնամանիցեն այդ փրկութիւն մարդկան գործիցէ, իբր ասեն զպատճառ մերոյն փրկութեան անարգանաց առիթ Աստուծոյ եղանիլ (Եջ 112-113, տ. 14-11):

Քաղված է Բա ճառից, տարընթերցում 32-57:

Է. Երանելոյ Թեոդոտի եպիսկոպոսի Անկիրայ, որ ի Ծնունդն Քրիստոսի Երեւցաւ այսութեան Աստուած այսար ի Կոսէ, եւ կոյսն մնաց կոյս եւ մայր եղեւ, քանզի անապականութեան առիթն ապականութիւն ոչ գործէ— Քանզի եթէ ըստ մեզ ծնիցաւ, մարդ էր, իսկ եթէ զմայրն կոյս պահեաց, Աստուած ծնիցեալն քաջախորհրդոցն ճանաչի (Եջ 126, տ. 16-30):

Քաղված է Բա ճառից, տարընթերցում 57-60:

Ը. Երանելոյ Թեոդորայ եպիսկոպոսի Անկիրայ ի խաւից, որ ի Ծնունդն Քրիստոսի. Որո՞վ արդեւք պատճառաւ իր զախտակրութիւնս մարդկան օտարեալ, վասն զի կամեր ախտի զախտ ի բաց բառնալ եւ մահուամբ խափանել զմահ... ուխտն զիոնատեսակացն առնուն, յետ այսորիկ եւ մահմ՝ իբր Աստուծոյ եղեալ, խափանէ զմահն, եւ մտեալ լուծանէ զգողողութիւն մահուն (Եջ 270-271 տ. 31-8):

Քաղված է Բա ճառից. տարընթերցում 191-199:

Հրապարակության պարբասարկեց  
ՌԱԿՈԲ ՔՅՈՍԵՅՑԱՆԸ